# ՆԱՄԱԿՆԵՐ ԾԻԷՅՑԱՐԻԱՅԻՑ

## I

Նեւշատէլ, 26/14 սեպտեմբերի, 1893 թ.

«Շուէյցարիա» բառը այնքան է մեր ականջին քաղցր հնչում, այնքան են մեզ մանկութեան հասակից սկսած ասել, պատմել այդ երկրի մասին, այնքան ենք մենք կարդացել այդ երկրում տիրող կարգ-կանոնների, նրա ժողովրդի, բնութեան մասին, որ նա մեզ համար մի նոր «Աւետեաց աշխարհ» է դարձել։ Եւ տեսնել այդ երկիրը, ուսում առնել, ապրել, ազատ շունչ քաշել մի քանի տարի նրա հիւրընկալ դրկի մէջ մեր իւրաքանչիւրիս ամենատենչալի իղձերից մէկն է դարձել...

Երբ առաջին անգամ մուտք էք գործում այդ Աւետեաց երկիրը, երբ տեսնում էք նրա բարձրաբերձ ձիւնագագաթ լեռները, նրա գեղեցիկ և խորունկ ձորեր-ձորակները, ուր հրաշալի ջրվէժները իրանց բարձրութեամբը, գեղեցկութեամբը և սաստիկ գոռում-գոչումով մի խոր, աննկարագրելի տպաւորութիւն են գործում այցելողների վրայ։ Երբ տեսնում էք նրա պարզ, վճիտ, հանդարտ և խաղաղ, երբեմն տխրագէմ, խռովայոյզ և կատաղի լճերը, լճակները, այս բոլորը միասին մի այնպիսի խորին, ուժգին տպաւորութիւն է գործում ձեզ վրա, որ դուք առաջին անգամից մնում էք շարուած-հիացած բնութեան այդ հրաշալիքների առջև, այնքան վեհ, այնքան գեղեցիկ և զմայլեցուցիչ են նրանք։

Երբ դուք՝ տեղս նոր ժամանած մէկը, մտնում էք Շուէյցարիայի քաղաքները, վերջինները ձեզ ներկայանում են բոլորովին այլ ֆոնի վրա, ոչ նման եւրոպական ուրիշ մեծ աղմկալից քաղաքներին։ Դուք այստեղ՝ այդ ֆոնի վրա, չէք պատահիլ այնքան շլացնող գոյների, աղմկալից կեանքի... Նրանք ներկայացնում են հանդարտ, համեստ քաղաքներ։ Դուք զարմանում էք նրանց ծայրաստիճանութեան հասցրած մաքրութեանը, կանոնաւոր կանալիզացիային, լայնատարած ալգի-ճեմելիքներին, բնակչութեան հա-

---

[1]) Մէկը ամբողջի համար, ամբողջը մէկի համար։

մար ստեղծած այն բազմաթիւ յարմարութիւններին, որոնք ուրիշ երկիրներում գոյութիւն չունեն կամ դեռ նոր են ծրագրւում։

Իսկ երբ դուք սկսում էք դիտել տեղս տիրող կեանքը, կարգ-կանոնները, երբ դուք մտնում էք այդ նոյն կեանքի հոսանքի մէջ, սկսում էք վայելել այն բոլոր իրաւունքները, բարիքը, ազատութիւնը, առանց որոնց մարդու կեանքը կեանք չէ, այլ, այսպէս ասած, մի տեսակ végétation (արօտաբանութիւն), այն ժամանակ դուք ձեր ամբողջ էութեամբը զգում էք Շէյցարիայի մէջ լինելը։ Երբ տեսնում էք այդ երեք տարբեր ազգութիւններից՝ տարբեր լեզուով, կրօնով, սովորութիւններով, բոլոր յատկութեամբ, իմաստալից կերպով կազմւած դաշնակցութիւնը, ուր հաւասար կերպով պաշտպանւած են անհատի և ամբողջ բնակչութեան իրաւունքները։ Un pour tous, tous pour un [1]), ասում է հելվեցիական մի հին դէվիզ։ Այդ սկզբունքը ոչ մի տեղ, ոչ մի երկրում չի իրագործւած այն աստիճան ծաւալով, ինչպէս այստեղ՝ Շէյցարիայում։

Սկսում էք դիտել ուսումնական մասը։ Տեսնում էք ամեն տեսակի և կարգի դպրոցներ՝ անթիւ, անհամար սիրւած ամբողջ Շէյցարիայում։ Միջնակարգ, բարձրագոյն (վերջիններիս թիւը 8 ից անցնում է. այլի առաջ ունեցէք տեղիս ազգաբնակութեան թիւը՝ մօտ 3,000,000), տարրական, ֆրեօբելեան դպրոցները տարածւած են Շէյցարիայի իւրաքանչիւր անկիւնում, ուր կան մի քանի տուն բնակիչներ։ Օրինակի համար վերցնենք Նեւշատէլը։ Այս քաղաքը, որի բնակիչների թիւը հազիւ 15,400-ի է հասնում, ունի մի բարձրագոյն դպրոց (Ակադեմիա), 8 միջնակարգ, 1 այգեգործական, 1 երկրագործական, մի նկարչական, մի ժամագործի և այլ դպրոցներ։ Անցեալ ուսումնական տարւայ վերջին ուսանող և ուսանողուհիների թիւը 2050-ից անց էր։

Մտնում էք դպրոցները։ տեսնում և հիանում էք։ Քաղաքի կամ գիւղի մեծ, գեղեցիկ յարմար տունը, իմացէք որ դա դպրոցն է։ Բոլոր յարմարութիւններ, ամեն տեսակ դիւրութիւններ ուսանող անհատի համար... Ուսուցիչների և աշակերտների մէջ տիրող սիրալիր և պարզ յարաբերութիւնները, երեխաների ուրախ-զարթ, զուրկ ճնշումից դէմքերը,—այս բոլորը ձեզ գգւում, փայփայում է։

Աստիճան զարգացած հասարակական և ընկերական կեանք։ Բազմազոյն և բազմաթիւ ընկերութիւններ տարածւած ամեն ուրեք, օրինակ Նեշա-

---

[1]) Մեր ձեռքի տակ ստատիստիկական տեղեկութիւններ պարունակող մի բրոշիւր՝ թէ՛ լով Նեւշատէլում գոյութիւն ունեցող 70 ընկերութիւններ, աւելացնում է etc (և այլն) բառը։

[2]) Նեւշատէլի նման փոքրիկ քաղաքում այժմ լոյս են տեսնում 25 օրաթերթ։ Նեւշատէլի կանտոնում տասնեակ գիւղերի անուն կարելի է տալ, ուր լոյս են տեսնում մի կամ նոյն իսկ մի քանի լրագիրներ։

տելում գուցէ 100-ից ավելի ընկերութիւններ լինեն [1]։ Մի որոշ գաղափար տալու համար թւենք դրանցից միք անիսը՝ Պատմական և հնագիտական, բնական գիտութիւնների (ընդգէտների), բանտրական, հրացանաձիգների, մարմնամարզների, ազգասէր-արմատականների (Association patriotique radicale), դէմոկրատ-ազատամիտների (Association démocratique libérale), Գրիտլի ընկերութիւն (Société du Grutle—սոցիալ-դէմոկրատների), երգիչների, երաժիշտների, և այլն, այլն։

Սկսում էք հետևել տեղիս լրագրութեանը։ Ցաղագրական խոսքի ազատութիւն. զանազան գոյնի և տեսակի լրագրութիւն։ Անգին ծաւալ ստացած [2]), նա մուտք է գործում ազգաբնակութեան բոլոր խաւերը. քաղաքացու տանից սկսած մինչև գիւղացու խրճիթը։ Իւրաքանչիւր ընտանիք ստանում է մի որ և իցէ լրագիր։

Ձրի գրադարաններ, մուզէյներ, ընթերցարաններ բաց են իւրաքանչիւր անհատի համար։ Իւրաքանչիւր ոք կարող է գիրք վերցնել առանց ո՛ի որ և իցէ գրաւականի և վարձի։ Ի դէպ, սաստիկ զարգացած է հաւատարմութիւնը դէպի անհատը։ Փող էք փոխադրում փոստով, փոստատանը ձեզ անդորրագիր չենն տալիս, փողը իր ժամանակին հասնում է ըստ հասցէին։

Երկաթուղային բազմաճիւղանի, խիտ ցանց, նաւազնացութիւն նոյն իսկ ամենափոքրիկ լճակների վրա, քաղաքները, նոյն իսկ գիւղերը միացրած փոստով, հեռագրաթելով, տելեֆոնով... Հաղորդակցութեան բոլոր կարմարութիւններ... Սաստիկ շարժում, ծաղկած կեանք փչում, խփում է ձեր երեսին իւրաքանչիւր անկիւնից։

Ազատութիւն խոսքի, ազատութիւն գործունէութեան, ազատութիւն ամեն տեսակ պրոպագանդայի։ Իւրաքանչիւր անհատ՝ առանց խորութեան նրա գիրքի հասարակութեան մէջ, ազատ է խոսել, գրել և քարոզել, ինչ որ կամենում է։ Ո՛չ մի արգելք, ո՛չ մի խոչնդոտ։ Նա ազատ է իր հասարակական գործունէութեան ասպարիզում՝ ինչ գործի և տեսակի էլ լինի վերջինս։

ՍԻՄԷՕՆ ՇԽԵԱՆՑ

---